Հայաստանի Ամերիկեան Համալսարանի 10-Ամեակ

Հոկտեմբեր 6-ին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը (Հ.Ա.Հ.) տօնախմբեց իր հիմնադրութեան տասնամեակը: Հանդիսութեան ընթացքին Հ.Հ. Նախագահ Ռոբերտ Քոչարեան, իր Հոկտեմբեր 5-ի հրամանագրով՝ եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի 10-ամեակի կապակցութեամբ «Մովսէս Խորենացի» շքանշանով պարգեւատրեց Հ.Ա.Հ.-ի հիմնադիր անդամներ դոկտ. Միհրան Աղպաթեանը (Հիմնադիր Նախագահ) եւ դոկտ. Արմէն Տէր Կիւրեղեանը՝ Հ.Ա.Հ.-ի Ճարտարագիտութեան Բաժնի Տեկան, ինչպէս նաեւ Համալսարանի ներկայ նախագահը՝ դոկտ. Յարութիւն Արմէնեանը, կրթական մարզին բերած իրենց գնահատելի նպաստին համար:

Իր ելոյթին մէջ, նախագահ Քոչարեան վերառաւ Հ.Ա.Հ.-ի խաղացած աչքառու դերը Հայաստանի ժողովրդավարութեան, տնտեսական զարգացման եւ կրթութեան բնագաւառներուն մէջ:

Հայաստանի Ամերիկեան Համալսարանը, Երեւան

Հ.Ա.Հ.-ի Հոգաբարձուներու Խորհուրդի հիմնադիր անդամ դոկտ. Ուիլիըմ Ֆրէյզըր, եւ Հ.Ա.Հ.-ի փոխ-նախագահ դոկտ. Տոնալտ Ֆիլլիպը ստացան Կրթական Նախարարութեան Ոսկէ Մէտալը, առ ի գնահատութիւն կրթական զարգացման բերած իրենց նեցուկին:

Իր կարգին, Հ.Ա.Հ.-ն պատուի արժանացուց հանգուցեալ Վիլիկ Յարութիւնեանը (Բարձրագոյն Կրթութեան եւ Գիտութեան նախկին նախարար) եւ Ծովակ Աւագեանը (Բարձրագոյն Կրթութեան եւ Գիտութեան նախկին փոխ-նախարար), Հ.Ա.Հ.-ի Հոգաբարձուներու Խորհուրդի անդամ Էտուարդ Աւետիսեանը, Հ.Ա.Հ.-ի փոխ-նախագահ Տոնալտ Ֆիլլիպը եւ Երեւանի Ճարտարագիտութեան Համալսարանի նախագահ Եուրի Սարգիսեանը, Հ.Ա.Հ.-ի ընծայած իրենց բացառիկ նեցուկին համար, զանոնք պարգեւատրելով Համալսարանի 10-ամեակին առիթով պատրաստուած յատուկ յուշամէտալով:

Հայաստանի Անկախութեան օրը, 1991-ին իր դռները բացած Հ.Ա.Հ.-ն կամուրջ մը եղաւ վերանկախացած Հայաստանի Հանրապետութեան եւ արեւմտեան աշխարհին միջեւ, Հայաստանի ժողովրդավարական նոր համակարգէն ներս հաստատելով բարձրագոյն կրթութեան ամերիկեան ոճով սիստէմ մը, նոր հեռանկարներ բանալով հայաստանաբնակ համալսարանական ուսանողներուն առջեւ:

2000 թուականի տրեալներուն համաձայն, Հ.Ա.Հ.-ի շրջանաւարտներու հարիւրէն 73-ը կ'ապրին Հայաստանի մէջ կամ վերադարձած են երկիր: Շրջանաւարտներու 10-15 առ հարիւրը դոկտորական թէզ կը պաշտպանեն արտասահմանեան կրթական լուրջ հաստատութիւններու մօտ: Հայաստան բնակող շրջանաւարտներու հարիւրէն 95-ը առեւտուրի եւ հանրային բնագաւառներուն մէջ ղեկավար դիրքերու վրայ են եւ կը ծառայեն Հայաստանի մտաւորական զարգացման, Հանրապետութիւնը դնելով ազգերու միջազգային ընտանիքի պարունակին մէջ: